

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Հայոց գրերի գիւտի 1500-ամեայ տարեդարձը լրագաւ 1904 թւին. սակայն այդ ժամանակ Ռուսաստանի հայ ժողովուրդն այնպիսի տագնապի մէջ էր գտնոււմ, որ յորեկեան կատարելու ոչ տրամադրութիւն կար և ոչ էլ ճնարաւորութիւն: Հայ ժողովուրդն իր ինքնուրոյն գոյութեան կոխն էր մղոււմ և հարկաւ այգպիսի հանգամանքում յորեկեան տօնելը շատ երկրորդական խնդիր պէտք է համարւէր: Անցան այդ դժբախտ տարիները, հայերս մի փոքր ազատ շունջ քաշեցինք, սակայն և այնպէս 1500-ամեայ յորեկեանը մոռացութեան տրւեց: Եկաւ 1912 թրւականը և մեր հասարակութեան մէջ արժարժւեց հայ տպագրութեան 400-ամեայ յորեկեանը տօնելու գաղափարը. այս խնդրի արժարժման միջոցին բարեբախտաբար միտք յղացւեց այդ տօնի հետ միացնել նաև գրերի գիւտի 1500-յորեկեանը: Այս երկու յորեկեանները միացնելու գաղափարը մեծ ընդունելութիւն գտաւ ամբողջ հայ ազգի խոշոր շրջաններում և շնայելով տեղի ունեցած մի քանի անախորժ գէպերին, որ առաջացան մեր ներքին պառակտումների շնորհիւ, յորեկեանները տօնւեցին մեծ շքով և համազգային կերպարանք ստացան:

Հայութեան երկու գլխաւոր հատւածներն ևս՝ թէ տաճկահայերը և թէ ռուսահայերը մեծ ոգևորութեամբ և համերաշխութեամբ տօնեցին պարծանքի արժանի քաղաքակրթական այդ մեծաշուք յորեկեանները. լեռ շնացին նաև փոքր հատւածները՝ պարսկահայերը, ևւրոպաբնակ ունոյն իսկ ամերիկաբնակ հայերը և այսպիսով սուրբ Մես-

րոպի և Սահակի անունները ի մի ձուլեցին ամբողջ հայութեան զգացմունքները: 1913 թ. հոկտեմբերի 12-ը մի պատմական օր դարձաւ հայ տպագրութեան մէջ և անջընջելի կմնայ հայ ազգի քաղաքակրթական պատմութեան էջերում: Կարելի է վստահ ասել, որ չնայելով մի քանի աննպաստ հանգամանքներին՝ հայութիւնը պատուով դուրս եկաւ համազգային յոբելեանական հանդէսներից և արժանացաւ օտարազգիների յարգանքին: Հոկտեմբերի 12-ին ամեն մի հայ անհատ կարող էր պարծենալ իր հայութեամբ. միթէ փոքր բան է ապրել խաւար Ասիայում, բռնութիւնների հայրենիքում, տգիտութեան անհասանելի քողով ծածկւած միջավայրում և տօնել քաղաքակրթութեան ամենաէական պայմանի, գրերի գիւտի 1500-ամեայ յոբելեանը, մինչդեռ այժմեան եւրոպական ամենակուրտուքական ազգերից շատ շատերը դեռ ևս չեն հասել այդ բախտաւոր վայրկեանին: Այո, ամեն մի հայ իրաւունք ունէր մեծ յոբելեանի օրերին պարծանքով և լիաշուքի օրհնութեամբ յիշելու սուրբ Մեսրոպի և Սահակի խնկելի անունները:

Հայութիւնը անհուն երախտագիտութեամբ է յիշում այդ մեծ մարդկանց անունները, որովհետեւ գիտակցում է, որ առանց գրի և գրականութեան՝ ոչ թէ այժմեան դիրքը կունենար ազգերի շարքում, այլ գուցէ և գոյութիւն չունենար այսօր, կամ եթէ իր գոյութիւնն էլ պահպանած լինէր, չէր տարբերւի իր գրացի վայրենաբարոյ քրդերից:

Եւրոպական մեծ ազգերն այսօր ճանաչում են մեզ, ոչ թէ մեր Տիգրանների և Լևոնների, այլ մեր գրի ու գրականութեան շնորհիւ. գիրն ու գրականութիւնն է կռել, կոփել հայութեան անցեալը և կերտում է ներկան ու ապագան: Եթէ մենք այսօր հասել ենք որոշ ազգային գիտակցութեան, եթէ շարունակ ձգտել ենք քաղաքակրթութեան և յոյսեր ունենք ապագայի նկատմամբ՝ ամբողջովին պարտական ենք հայ գրին ու գրականութեան: Եթէ մենք այսօր հարիւրաւոր դպրոցներ ունենք և հայ մա-

տաղ սերունդը կրթում, դաստիարակում ենք ազգային հոգով՝ դարձեալ պարտական ենք մեր զբիւն ու գրականութեան: Ի՞նչ արժէք պիտի ունենար հայ դպրոցը՝ առանց հայոց զբիւ: Ի՞նչ հիմք պէտք է ունենար ազգային դաստիարակութիւնը՝ առանց հայոց գրականութեան. Ի՞նչ վիճակի մէջ պէտք է լինէր հայոց լեզուն՝ առանց զբիւ ու գրականութեան: Սակայն կարո՞ղ է այժմ մի ազգ իր գոյութիւնը պահպանել իբրև ազգութիւն՝ առանց դպրոցի, առանց ազգային դաստիարակութեան, առանց մշակած լեզուի:

Ահա այս բոլորը գիտակցելով, հայ մտաւորականութիւնը իր դերը կատարեց յաջողութեամբ և ազգային պատարժանութեամբ նախանձախնդիր հանդիսանալով՝ հայ ժողովրդի գիտակցութիւնն արթնացրեց: Գարձեալ հայ զբիւ և լրագրութեան շնորհիւ էր, որ աշխարհիս չորս կողմը սփռւած հայերը մասնակցեցին համազգային յոբելեանին, զգացին մեծ տօնի նշանակութիւնը և ամբողջ հոգևով ուրախակից եղան: Միթէ հայութեան քաղաքակրթական յաղթանակ չպէտք է համարել այս յոբելեանը, երբ նոյն իսկ ամենահեռաւոր և մոռացւած Հաբէշտանից (Աբխազիա) անգամ հայի ցնծութեան ձայնը լսեց, երբ Տաճկահայերի համար կրկնակի տօն և պատմական օր դարձաւ՝ աւետարանական հայերի ազգային—քաղաքական միացմամբ:

Սուրբ Մեսրոպի և սուրբ Սահակի պաշտելի աճիւնները թէև իրարից հեռու, սակայն կարծես թէ այսօրւայ հայութեան երկու մեծ հատուածներին մխիթարելու համար՝ առաջինը գտնուում է Ռուսահայաստանում, իսկ երկրորդը Տաճկահայաստանում. եթէ Օշականը մեր ուխտագնացութեան նւիրական վայրն է, նոյն չափով էլ Աշտիշատը տաճկահայերի ուխտագնացութեան սրբատեղին է: Եթէ համազգային յոբելեանի կենդանավայրը էջմիածինը հանդիսացաւ, մասամբ այն էր պատճառը, որ Օշականը, սուրբ Մեսրոպի նւիրական դամբարանը, միայն մի ժամ-

ւայ հեռաւորութեան վրայ է գտնուում Էջմիածնից: Ո՛րքան պէտք է հրճւէր սքանչելի Մեսրոպի հոգին՝ եթէ Աստուածային տնօրինութեամբ կարողանար տեսնել թէ ի՛նչպիսի երկիւղածութեամբ, հրճանքով և խորին երախտագիտութեամբ համբուրում են իր 1500 տարւայ աճիւնը ծածկող սառը շիրիմը հայութեան ներկայացուցիչները՝ ազգընտիր կաթողիկոսից սկսած մինչև պարզասիրտ գեղջուկը: Այն սրբազան լուսոյ շողը, որ ժողորդական աւանդութեամբ (պատմում է Մովսէս Խորենացին) ուղեկցեց սբ. Մեսրոպի դագաղին մինչև գերեզման իջեցնելը, կարծես վերակենդանացել էր 1500 տարի յետոյ և առաջնորդում էր հայութեան ներկայացուցիչ զաւակներին դէպի նրա գերեզմանը. շարան-շարան գնում էին անխտիր՝ թէ մեծ, թէ փոքր, թէ հարուստ, թէ աղքատ, թէ ուսանայ, թէ տաճկահայ և պարսկահայ, թէ լուսաւորչական, թէ աւետարանական: Բոլորը ոգևորւած էին մի գաղափարով, բոլորը ձգտում էին մի նպատակի՝ երկիւղածութեամբ գլուխ խոնարհել մեծ շիրիմի առաջ. ամեն մէկի շրթունքը տաննեակ և հարիւր հազարաւոր հայերի անունով զբրոշմում էր պարզ շիրմին ջերմ համբոյրներ. ամեն մէկի սիրտը միացնում էր տաննեակ և հարիւր հազարաւոր հայերի անկեղծ զգացմունքները...

Սրբազան շիրմի վրայ պատարագի արարողութիւնը կատարւեց վեհափառ կաթողիկոսի, Էջմիածնի միաբանութեան, պատգամաւորների և օշականցիների խումն բազմութեան ներկայութեամբ: Պատարագից յետոյ, եկեղեցու գաւթում, բացօդեայ, տեղի ունեցաւ յորելեանական հանդէսը. հանդիսագիր Վեհափառը համառօտ խօսքով դրւատեց սբ. Մեսրոպի ու Սահակի սյնքան արդիւնաւոր գործունէութիւնը և դրանով բացեց յորելեանական հանդէսը: Այնուհետև խօսեցին հայութեան բոլոր հատուածների ներկայացուցիչները՝ հայեացքները մերթ ուղղելով 1600 տարւայ եկեղեցու ալեգարդ պետին, մերթ 1500 տարի գոյութիւն ունեցող սրբազան շիրմին. խօսեցին,

կարգացին՝ փառաբանեցին, խունկ ծխեցին մեծ մարդու
 աճիւնին, շնորհաւորեցին: Վեհ տպաւորութեամբ վերջա-
 ցաւ պատմական հանդիսի սկիզբը. շարունակութիւնը տեղի
 ունեցաւ Էջմիածնում, որ տեւեց երեք օր. մասնակցեցին
 Վեհափառն ամբողջ միաբանութեամբ, ճեմարանը, պատ-
 դամաւորները և ժողովրդի մեծ բազմութիւն: Կարգացւե-
 ցան բազմաթիւ հեռագիրներ աշխարհիս բոլոր կողմերից՝
 հայ ազգային հաստատութիւններից, հիմնարկութիւններից,
 ընկերութիւններից և անհատներից. կարգացւեցան դասա-
 խօսութիւններ, եղաւ ցերեկոյթ ճեմարանում, տեղի ու-
 նեցան պատգամաւորական ժողովներ: Այդ երեք օրւայ
 ընթացքում սբ. Մեսրոպի ու Սահակի անունները, հայոց
 գիրն ու գրականութիւնը հազարաւոր բերանների օրհնու-
 թեան առարկայ եղան: Երանի այդ մրմունջները մշտա-
 տե լինեն հայ անհատների շրթունքների վրայ. հայ գրի և
 գրականութեան բարգաւաճումն ու ծաղկումը դառնայ մեր
 մշտական հոգացողութեան առարկան. հայ դպրոցի առա-
 ջադիմութիւնը լինի մեր տեական բաղձանքը: Թող հայ
 ժողովրդի ինքնուրոյն գոյութեան գիտակցութիւնն աճի-
 քան բարձրանայ, որ օտարամոլութեան ձգտումը հետզհե-
 տէ վերանայ մեր միջից և հայ գրով ու գրականու-
 թեամբ սննդւին հայութեան բոլոր զաւակները:

Համազգային յոբելեանի առթիւ մաղթենք, որ ապա-
 գայում, երբ հասնի հայոց գրի գիւտի 1600-ամեակը տօ-
 նելու օրը՝ հայ ժողովուրդը հասած լինի իր ինքնուրոյն
 կեանքի աւելի բարձր աստիճաններին. թող այդ ցանկա-
 լի օրը բոլոր հայերն առանց բացառութեան գիտենան
 կարգալ և գրել սբ. Մեսրոպի գտած այբուբենով. այդ
 կլինի ամենափառաւոր արձանը, որ երախտագէտ հայու-
 թիւնը կարող է կառուցանել Հացեկացցի հանճարեղ Մաշ-
 տոցին:

Իսահակ Յարութիւնեան